ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«17» ապրիլի 2018 թ. N 92-Ա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի «Գյուղատնտեսական կոոպերատիվներին աջակցության պետական ծրագրի մշակման և հաստատման կարգը սահմանելու մասին» N 363–Ն որոշման հավելվածի 2-րդ կետը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել գյուղատնտեսական կոոպերատիվներին աջակցության պետական ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի տեղակալ Ռ. Մակարյանին:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ԻԳՆԱՏԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հավելված
ՀՀ գյուղատնտեսության նախարարի
2018 թվականի մարտի 17-ի
N 92-Ա հրամանի

ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ

I. ՆԱԽԱԲԱՆ

1. Հանրապետությունում փոքր չափեր ունեցող գյուղացիական տնտեսություններն ունենալով հողօգտագործման, ջրօգտագործման, տեխնիկական ապահովման, արտադրանքի իրացման, մասնագիտական խորհրդատվության և տեղեկատվության ապահովվածության հետ կապված բազմաբնույթ խնդիրներ, չունեն համագործակցության հստակ և կայուն մեխանիզմներ ու հնարավորություններ:

2. Ստեղծված իրավիճակում կարևորվում և պահանջվում է ագրարային ոլորտում կիրառվող տնտեսավարման ձևերի կատարելագործում, մասնավորապես՝ կամավորության սկզբունքի վրա հիմնված կոոպերատիվների արմատավորման և զարգացման միջոցով, քանի որ այն հնարավորություն է ընձեռում առավելագույնս օգտագործել կոոպերատիվի կազմում ընդգրկված յուրաքանչյուր անդամի տնտեսական ներուժը՝ ապահովելով անհամեմատ բարձր եկամուտ: Շուկայական հարաբերությունների պայմաններում կոոպերատիվը կարող է համակարգել գյուղմթերքի արտադրության, սպասարկումների, իրացման և մատակարարման ոլորտներում տարբեր գործառույթներ:

3. Գյուղատնտեսական կոոպերատիվների անդամների հիմնական զբաղմունքն արտադրությունն է, որի համար պահանջվում են մի շարք աջակցող ծառայությունների իրականացում՝ գյուղմթերքի փոխադրում, տեսակավորում և վերամշակման միջոցով հավելյալ արժեքի ապահովում: Գյուղատնտեսությունում տնտեսավարողներն ունեն փոքր մասշտաբներ, որի հետ կապված նաև բանակցելու և սակարկելու սահմանափակ հնարավորություն: Միաժամանակ, գյուղատնտեսությունում անհատ տնտեսավարողի համար գյուղատնտեսական մթերքների հավաքման և իրացման գործարքների իրականացման համար անհրաժեշտ ծախսերը բավականին բարձր են:

4. Գյուղմթերքի իրացման և վերը նշված հիմնախնդիրների լուծման նպատակով գյուղատնտեսական կոոպերատիվները կարող են աջակցել գյուղատնտեսությունում տնտեսավարողներին՝ իրացման, մարկետինգային և արտադրության օպտիմալացմանը նպաստող ծառայություններ մատուցելու միջոցով:

5. Գյուղատնտեսական կոոպերատիվների տնտեսական զարգացման և կայունության ապահովման տեսանկյունից կարևորվում է պետական աջակցության մեխանիզմների կիրառումը:

II.ԾՐԱԳՐԻՄՇԱԿՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

6. Ծրագիրը մշակվել է հիմք ընդունելով «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի «Գյուղատնտեսական կոոպերատիվներին աջակցության պետական ծրագրի մշակման և հաստատման կարգը սահմանելու մասին» N 363–Ն, 2010 թվականի նոյեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը և Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 1476-Ն և 2014 թվականի մարտի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2014-2025 թվականների հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 30-ի N 1207-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 442-Ն որոշումների դրույթները:

III. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

7. Հայաստանում վերջին տարիներին գյուղատնտեսական կոոպերացիայի բնագավառում գրանցվել է դրական առաջընթաց: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 2015 թվականի դեկտեմբերի 21-ին ընդունված «Գյուղատնտեսական կոոպերատիվների մասին» ՀՕ-190-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկման արդյունքում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցվել է ավելի քան 50

գյուղատնտեսական կոոպերատիվ՝ միավորելով գյուղատնտեսությունում շուրջ 500 տնտեսավարողի:

8. Համաձայն վերլուծության արդյունքների՝ գյուղատնտեսական կոոպերատիվներին անդամակցելը դրական ազդեցություն է ունեցել տնտեսավարողների միջև փոխադարձ աջակցության, գործունեության արդյունավետության և գիտելիքների ու հմտությունների բարձրացման գործում:

9. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության կողմից իրականացված ուսումնասիրությունների համաձայն, գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծման արդյունքում գրանցվել է արտադրանքի ինքնարժեքի և արտադրական ծախսերի նվազում՝ 20-30%-ով, շահագործվել է շուրջ 500 հա անմշակ հող, տնտեսավարողների կողմից կատարված ներդրումների ծավալը կազմել է մոտ 500 մլն դրամ: Համատեղ գործունեության արդյունքում, տնտեսավարողների կողմից ներդրվել է բարձրարժեք և ոչ ավանդական մշակաբույսերի արտադրություն (հնդկացորեն, ոսպ, կտավատ, բրոկոլի, ֆիզալիս, կիվանո, արտիշոկ, և այլն):

10. Չնայած գրանցված որոշակի ձեռքբերումներին, գյուղատնտեսական կոոպերացիայի բնագավառում առկա են մի շարք լուծում պահանջող խնդիրներ, որոնք խոչընդոտում են գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծմանը և արդյունավետ գործունեությանը, մասնավորապես՝ կոոպերատիվի գաղափարախոսության ոչ ճիշտ ընկալումն ու ագրոպարենային համակարգում արդիական տեխնոլոգիաների, արտադրության կազմակերպման արդյունավետ ձևերի ներդրման համար անհրաժեշտ գիտելիքների ոչ բավարար մակարդակը, կոոպերատիվների ձևավորման համար իրավական և տնտեսական դաշտի կատարելագործման ուղղությամբ տարվող աշխատանքների դանդաղ ընթացքը, հողային, ջրային, աշխատանքային ռեսուրսների օգտագործման և կառավարման դեռևս ցածր արդյունավետությունը, տնտեսավարողների ֆինանսական անկայուն վիճակը և մի շարք այլ գործոններ:

11. Վերը նշված խնդիրների մեղմմանը և լուծմանը կարող են նպաստել գյուղատնտեսական կոոպերատիվների համար անհրաժեշտ պայմանների ու մեխանիզմների ստեղծումը, որի հետ կապված հանրապետությունում իրականացվող ագրարային քաղաքականության կարևոր բաղկացուցիչ մաս պետք է հանդիսանա պետական աջակցությունը գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման գործընթացին:

IV. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

12. Ծրագրի նպատակն է՝ պետական ուղղակի աջակցության մեխանիզմների կիրառմամբ Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման խթանումը և կարողությունների հզորացումը:

13. Ծրագրի խնդիրներն են.

1) կոոպերատիվների սկզբունքների, առավելությունների, առանձնահատկությունների վերաբերյալ տարբեր մեխանիզմների (տեղեկատվական, խորհրդատվական, ուսուցողական և այլն) կիրառմամբ գյուղատնտեսությունում տնտեսավարողների իրազեկվածության բարձրացումը,

2) գյուղատնտեսական կոոպերատիվների ֆինանսական ռեսուրսների հասանելիության հնարավորությունների ընդլայնումը:

V. ԾՐԱԳՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

14. Ծրագրի ուղղակի շահառուներ են հանդիսանում գյուղատնտեսական կոոպերատիվները, անուղղակի շահառուներ՝ գյուղատնտեսական կոոպերատիվների հետ գործունեություն իրականացնող գյուղատնտեսությունում այլ տնտեսավարողները և սպառողները:

VI. ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ (ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ)

15. Ծրագրով նախատեսված ծրագրային միջոցառումներն (ուղղություններն) են՝

1) խորհրդատվության, ուսուցման և տեղեկատվության հասանելիության և մատչելիության ապահովում՝ Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ներկայացրած պահանջարկի համաձայն, որը կներառի՝

ա. գյուղատնտեսական կոոպերատիվների շրջանում իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված դասընթացներ՝ կոոպերատիվի կարևորության, սկզբունքների, առավելությունների և առանձնահատկությունների, ինչպես նաև գյուղատնտեսական կոոպերացիայի բնագավառը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրական դաշտի վերաբերյալ՝ նախատեսելով տեղեկատվական

նյութերի (ուղեցույցներ, տեսանյութեր, հեռուստահաղորդումներ և այլ) տրամադրում և այցելություններ՝ տնտեսական բարձր արդյունավետությամբ գործող կոոպերատիվներ,

բ. հաշվապահների վերապատրաստման դասընթացներ՝ գյուղատնտեսական կոոպերատիվների գործունեության հաշվապահական հաշվառման առանձնահատկությունների, կարգի և հաշվետվությունների կազմման վերաբերյալ,

2) ֆինանսական ռեսուրսների մատչելիության ապահովում.

Նշված միջոցառումների շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 14-ի N 39 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած՝ գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրով (այսուհետ՝ վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիր) գյուղատնտեսական կոոպերատիվների համար վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորումը կիրականացվի այնպիսի չափաքանակով, որպեսզի վարկերը գյուղատնտեսական կոոպերատիվներին տրամադրվեն 3% տոկոսադրույքով: Վարկավորման ժամկետը սահմանվում է մինչև 5 տարի՝ ելնելով ներդրումների ուղղվածությունից (ներդրումների կառուցվածքում շրջանառու միջոցների տեսակարար կշիռը 30%-ից ավելի կազմելու դեպքում վարկավորումը կիրականացվի մինչև 2 տարի ժամկետով, իսկ հիմնական միջոցների 70% և ավելիի դեպքում՝ վարկավորումը կիրականացվի մինչև 5 տարի ժամկետով):

VII. ԾՐԱԳՐԻ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

16. Ծրագրի շահառուների կողմից ներկայացվող հայտերի վերաբերյալ տրվում են դրական եզրակացություններ, եթե դրանք բավարարում են սույն ծրագրին, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 13-ի «Գյուղատնտեսական կոոպերատիվներին աջակցության պետական ծրագրի մշակման և հաստատման կարգը սահմանելու մասին» N 363–Ն որոշման 7-րդ կետով սահմանված չափորոշիչներին և վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի պահանջներին:

VIII. ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՀԱՅՏԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԵՎ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

17. Շահառուների հայտերն ուսումնասիրվում, ամփոփվում և պատասխանվում են վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրով նախատեսված ժամկետներում:

18. Ծրագրի շահառուների հայտերի մերժման հիմք են հանդիսանում սույն ծրագրի 16-րդ կետով սահմանված չափորոշիչներին անհամապատասխանությունը:

IX. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

19. Ծրագրի իրականացման արդյունավետությունը պայմանավորված է մի շարք հնարավոր ռիսկային գործոններով, մասնավորապես՝

1) կոոպերատիվի գործունեության համար անբարենպաստ տնտեսական պայմանների առկայությամբ,

2) խորհրդատվական ծառայության ոչ բավարար մասնագիտական որակավորմամբ/պատրաստվածությամբ և ֆինանսական միջոցների անբավարարությամբ,

3) վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրով սահմանված ռիսկերով:

X. ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

20. Վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում նախատեսվում է 2018 թվականին գյուղատնտեսական կոոպերատիվներին տրամադրել շուրջ 70 մլն դրամի վարկ: Մայր գումարի տոկոսադրույքի սուբսիդավորվող գումարը կկազմի շուրջ 6,7 մլն դրամ: Տրամադրվելիք վարկերի սուբսիդավորման ենթակա տոկոսադրույքների հաշվարկն իրականացվել է հիմք ընդունելով.

1) գյուղատնտեսական կոոպերատիվների սեփականություն հանդիսացող գույքի արժեքը,

2) տրամադրվող վարկի մարման ժամկետը (3 տարի),

3) ակնկալվող պահանջարկը:

Աղյուսակ

Տարեթիվը	Մայր գումարը	Պահանջվող սուբսիդավորման գումարը
2018	70,000,000	6,707,489

21.Գյուղատնտեսական կոոպերատիվներին աջակցության պետական ծրագիրը նախատեսվում է իրականացնել «Գյուղատնտեսական խորհրդատվական ծառայություններ» և վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրերով նախատեսված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին:

XI. ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

22. Ծրագրի մոնիթորինգն իրականացվում է Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի և վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրով սահմանված դրույթների համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի կողմից:

XII. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

23. Ծրագրի իրականացումը կնպաստի գյուղատնտեսական կոոպերատիվների ձևավորման և զարգացման խթանմանը, կոոպերատիվի սկզբունքների, առավելությունների և առանձնահատկությունների վերաբերյալ գյուղացիական տնտեսավարողների իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, գյուղատնտեսական ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը, գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ավելացմանը, ֆինանսական միջոցների մատչելիության բարձրացմանը, արդիական տեխնոլոգիաների ներդրմանը և այլն:

24. Կգրանցվի կոոպերատիվների անդամների եկամուտների աճ, որը կնպաստի աղքատության նվազեցմանը, բնակչության զբաղվածության մակարդակի բարձրացմանը:

25. Վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում 2018 թվականին մատչելի վարկերից կօգտվի շուրջ 10 գյուղատնտեսական կոոպերատիվ՝ շուրջ 300 տնտեսավարող:

26.Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի կողմից մատուցվող ծառայությունների շրջանակներում 2018 թվականին կիրականացվի շուրջ 5 դասընթաց, խորհրդատվական ծառայություններից կօգտվի շուրջ 100 տնտեսավարող: